№ 240 ԿԻՐԱԿԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 240

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
[illegible] գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են ի բաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերի 28-ին, առաւօտեան ժամը 11-ին նշանակված է Դրամատիկական Ընկերութեան **ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

(Головинскій проспектъ)

Ժողովի զբաղմունքի առարկաներն են.

1) Ընտրութիւն գործադիր և պատւաւոր անդամների։
2) Ընկերութեան գոյութեան 10-ամեակի առիթով—
   ա) Փոփոխութիւն Ընկերութեան կանոնադրութեան։
   բ) Համագումար բեմական հայ գործիչների։
   գ) Թատրոնական ֆոնդ։
3) Զեկուցում Վարչութեան 1911-12 Թ. Թատերաշրջանի։
4) Հաշիւ 1911—12 Թ. Թատերաշրջանի։
5) Զեկուցում վերստուգիչ յանձնաժողովի։
6) Նախահաշիւ 1912—13 Թ. Թատերաշրջանի։
7) Զեկուցում մրցանակաբաշխութեան յանձնաժողովի։
8) Առանձին զեկուցում մրցանակաբաշխութեան յանձնաժողովի անդամ Ե. Մալխասեանի՝ մրցանակներ նշանակելու մասին։
9) Զեկուցում Ալ. Մանթաշեանի ժառանգներից ստացված 10,000 ր. և ա. Ն. Տէր-Ղազարեանի կտակած 3000 ր. գումարների մասին։
10) Ընտրութիւն—
   ա) Վարչութեան հերթով դուրս եկող երկու անդամի (Տ. Յովհաննիսեան և Գ. Կաֆեան) և երեք փոխ-անդամի (Գ. Տուրինեան, Գ. Երիցեան և Գ. Սարեան) փոխարէն։
   բ) Երկու մրցանակաբաշխ յանձնաժողովների 7 անդամի և 2 փոխ-անդամի։
   գ) Վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի։
11) Ընթացիկ հարցեր։

(Կ.) առ. 800. 2—2

„ՆԱԽՇԻՐԱ" ԸՆԿԵՐՈՒԹ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն վառելիք ծախողներին և **ԹԻՖԼԻՍՈՒՄ** բարածուխ գործածողներին, որ վերջացած է Թիֆլիսում իր կոնտրագենտի հետ ունեցած պայմանի ժամանակը, ուստի վարչութիւնը այսուհետև կարող է վագոններով պատուէրներ ընդունել բոլոր ցանկացողներից իր գրասենեակում Սօլօլակսկայա № 14.

(Կ.ու.) առ. 787. 6—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գրէնադէրսկի Գրուզինսկի 14-րդ գունդը, որ տեղաւորված է Թիֆլիսի նահանգում և գաւառում գտնվող Բէլիյ-Կլիւչ աւանում, հրաւիրում է ցանկացողներին ստանձնել գնդի համար միս և այլ մթերքներ մատակարարելու գործը՝ մի տարվայ ընթացքում, այն է՝ յունվարի 1-ից 1913 Թ. մինչև յունվարի 1-ը 1914 Թ., ներկայացնելով 2000 րուբլի գրաւական։ Աճուրդը տեղի կունենայ թէ բանաւոր և թէ ծրարված յայտարարութիւններով, նոյեմբերի 20-ին 1912 Թ., ցերեկվայ ժամը 12-ին, գնդի դիւանատանը՝ Բէլիյ-Կլիւչում, ուր և կարելի է տեսնել մատակարարման պայմանները։

Պօստով ուղարկվող յայտարարութիւնների ժամանակ, գրաւականը պէտք է ուղարկել առանձին ծրարով։ (Հ.Կ.) առ. 798. 3—2

1865.
1870.
1882.
1896.
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱԼՕՇՆԵՐ
1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ
ТРЕУГОЛЬНИКЪ
ԹՐԵՈՒԿՕԼՆԻՔ
(ԵՌԱՆԿԻՒՆ)

769.
0—5

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

Կը ներկայացնէ ՇԻՐՎԱՆԶԱԴԷի

ՆԱՄՈՒՍ

Դրամա 4 արար. և առաջաբանով։

Մասնակցում են. տ. տ. Արուսեակ, Գուլազեան, Զաբէլ, Լիւսի, Ցամիկ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Բերոյեան, Լաքա, Ղազարեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Յարութինեան, Վրոյր, Տէր-Առաքելեան և ուրիշները։

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։

Տեղերի գները սովորական են։

ԱԶԴ.—Երկուշաբթի, նոյեմբ. 5 ին, առաջին անգամ «ՈՍՏԱՅՆ»—դրամա 3 գործ. և «Հէքիաթ». դրամատ. էտ. 1 գործ. Միք. Մանուէլեանի։

Ռեժիսսոր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ

առ. 803. 2—2

ԷՋՄԻԱԾՆԻ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՕԴԻ հրամանով

տրվում է կապալով ԻՆՆ տարի ժամանակով ՆՈՒԽՈՒ փոխանորդութեան Ճալէթ գիւղի Ս. Աստուածածնի վանքի կալուածները՝ հողերը, անտառը և թթենիները աճրդախօսութեամբ, առանց կրկնաճուրդի, ներկայ տարվայ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 ԻՆ Նուխու Հայոց Հոգևոր Կառավարութեան ատեանում, որտեղ և կարելի է ծանօթանալ մանրամասն պայմաններին ամենայն օր՝ ժամը 10—2 ը։ Աճրդախօսութիւնը սկսվելու է 300 ՌՈՒԲԼՈՒՑ։ Աճրդախօսութեան մասնակցողները պէտք ներկայացնեն ՄԻ ՀԱՐԻՒՐ ՌՈՒԲԼԻ գրաւական։

(օ.մ.) առ. 808. 10—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ համար հրաւիրվում է Տնտեսական կառավարիչ։

Խնդիրները ընդունվում են մինչև նոյեմբերի 7-ը։

Պայմանների հետ կարելի է ծանօթանալ դպրոցի դիւանատան մէջ ամեն օր ցերեկվայ ժամը 1 ից մինչև 2-ը։

(Չ. Կ.) առ. 795. 3—2

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ

ОБОИ

ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

(Հ. Կ.) 291. 50—50

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բեռլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պոզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.

(Չ.ու.կ.) առ. 675. 30—21

ԲԺԻՇԿ

Յ. Մելիք-Նուբարեան

ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։

Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով։

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Ռուդիչևսկայա 10 (Լերմօնտօվսկ. դեղատան դիմացը)։

(Ե. Ե. Կ.) առ. 746. 100—13

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։

Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։
(երեկ. ժ. 5—7-ը։

Միխայլօվսկի պր. 86, տէլէֆ. № 576.

(Ե.Հ.Կ.) առ. 179. 100—49

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Այսօր, կիրակի, հոկտեմբերի 28-ին

ՀԱՅՈՑ ԴՐ. ԸՆԿ. ԹԱՏԵՐԱՍԵՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Մասնակցութեամբ տիկ. ՎԱՐԴՈՒՀՈՒ

Կը ներկայացնէ—Ա. ՑԱԳԱՐԵԼԻի

ԽԱՆՈՒՄ

Կոմ. 4 գործ., Թարգմ. Արաքսեանի

Մասնակցում են՝ տ. տ. Մանուչարեան, Ցամիկ, Սօֆիկ, Վարդուհի, օր. Թարխանեան, պ. պ. Գրիգորեան, Ղուչչեան, Ծոնեան, Մուրադեան, Յարութինեան, Տէր-Յովհաննիսեան, Փիրումեան և ուրիշ.։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

Հերթ. կարգադրիչներ՝ պ. պ. Երիցեան և Ստամբօլցեան

867. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռուդիչևսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող միայն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրօֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից՝ վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը՝ ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Ջակրժևսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ումիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց։ Կօնսուլտանտ՝ պրօֆեսսոր Մ. Ս. Սուբբոտին։

(Հ.Կ.) առ. 797. 100—2

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻԻ պրէպարատներով և էլէքտրականութեամբ։

Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9--12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։

Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանովսկայա)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 699. 100—31

ԲԺԻՇԿ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

փոխադրվեց «Փետրվարի 19-ի փողոցը» (նախկին Պէսկօվսկայա) № 30.

Վիրաբուժական հիւանդութիւններ

ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ՝ բժշկումն նորագոյն ձևով սեռամիզային գործարանների (սուր և քրօնիկական սուսանակի), միզափամփշտային քարերի՝ առանց վիրահատութեան (փշրելով), սեռական գործարանների անկարութեան (импотенція) և այլն, սիֆիլիսի 606 և 914-ով։

Թոքախտի բժշկումն վիրաբուժական միջոցով (արհեստական օդալանջալթաղանթ—искусств. пневмотораксъ) Forlanini, Brauer և այլոց ձևով։

Ընդունելութեան ժամերը՝ առ. ժ. 12—1-ը, եր. 5—7-ը։

(ա.օ.) առ. 761. 100—16

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ

Պահանջեցէք ամենուրեք!

Առ. և Ա. Մ.

„ՆԱՐԶԱՆ" | Սեղանատան | **„ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20."**

ԲՈՒԺԻՉ

ԷՍՍԷՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19. ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՕՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԷՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԷՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։

ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Михайловская ул., д. Зубарева.

Գլխաւոր պահեստը Վարչութեան կից՝ Պեատիգօրսկում։ Պրէյս-կուրանտները ձրի։

Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.

(Կ.) առ. 224. 39—30

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի, հոկտեմբերի 30-ին

Հայ դրամ. դերասանների ընկերակցութիւնը

Ղեկավարութեամբ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԻ

Կը ներկայացնէ

Առաջին անգամ ինքնուրոյն պիէս

Վաղարշակ Տէր-Պօղոսեանի

ՓՈՂ ԵՒ ՏԱՂԱՆԴ

4 գործ. 5 պատկերով

Սկիզբը երեկ. ժամը $8^{1}/_{2}$-ին։

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ թատրոնի կասսայում։

809. 1—1

ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Նոյեմբերի 1-ին Թիֆլիսում կը բացվի մի համագումար, որը նուիրված կը լինի բամբակագործութեան վերաբերեալ խնդիրներին։

Համագումարը կը շարունակվի 5 օր։

Անդրկովկասը և մասնաւորապէս հայ ազգաբնակութիւնը շատ մեծ շահագրգռութիւն ունեն բամբակագործական արդիւնաբերութեան և առևտրի զարգացման խնդիրներում։ Եւ մենք կը ցանկայինք, որ համագումարը գրաւէր առանձին ուշադրութիւն այն բոլոր անձերի կողմից, որոնց համար թանգ են մեր երկրի տնտեսական առաջադիմութեան հոգսերը։

Վերջին տարիներում մեր երկիրը անընդհատ աւելացնում էր բամբակի մշակութիւնը, որը նուաճում էր նորանոր ընդարձակ տարածութիւններ այն շրջաններում, ուր բամբակ երբեք ցանված չէ եղել։ Եւ ներկայումս հում նիւթի արդիւնաբերութիւնը հասնում է մեր երկրի համար մի խոշոր թիւ, այն է՝ աւելի քան 5 միլիոն պուդի։

Այդ հում նիւթը մաքրելուց յետոյ բաժանվում է երկու մասի՝ մաքուր բամբակի և սերմի կամ հունտի։

Անցեալ 1911 թւին մաքուր բամբակի քանակութիւնը մեր երկրում հասաւ 1.816,000 պուդի։

Չը նայելով բամբակագործութեան կատարած առաջադիմութեան, չէ կարելի ասել, որ նրա զարգացումը գտնվում է բաւարար դրութեան մէջ։ Ոչ։ Բամբակագործութիւնը Անդրկովկասում դեռ հեռու է բարեկարգ վիճակի մէջ լինելուց՝ թէ քանակի և թէ որակի վերաբերմամբ,

Որքան էլ համեմատաբար աչքի ընկնող լինի բամբակի արդիւնաբերութեան ընդարձակվելը, այնուամենայնիւ մեր երկրում դեռ շատ տեղեր կարող են ծառայել բամբակի մշակութեան համար, եթէ այդ տեղերը ոռոգվեն և պատրաստվեն այդ կուլտուրայի համար։

Երևանեան նահանգում՝ թէ Էջմիածնի, թէ Սուրմալուի, թէ Երևանի, թէ Շարուրի և թէ Նախիջևանի գաւառներում դեռ կան ընդարձակ հողեր, որոնք սպասում են ոռոգման՝ իրանց արդիւնաբերական ուժը ցոյց տալու համար։ Սարդարաբադի ընդարձակ անապատը, Մախտանի տափարակները, Նախիջևանի անջրդի տարածութիւնները պահեստի հողեր են բամբակագործութեան համար։

Նոյնը Գանձակի, Բագուի և մասամբ Թիֆլիսի նահանգներում, ուր Միլի, Մուղանի և ուրիշ անապատների լայնատարած տափարակները ձեռնարկու անհատների և պետական աջակցութեանն են սպասում արգաւանդ և արդիւնաբեր հողեր դառնալու համար։

Իսկ եթէ ուշադրութեան առնենք արդիւնաբերած նիւթի որակը, մենք կը տեսնենք, որ բամբակագործութիւնը կարօտ է չափազանց լուրջ ջանքերի, որպէս զի նա կարողանայ գրաւել վաճառանոցում և արդիւնաբերութեան մէջ այն դիրքը, որին նա կարող էր արժանի լինել նպաստաւոր հանգամանքներում։

Արդարև՝ անդրկովկասեան բամբակը կարող կը լինէր նոյնպիսի գեղարակ լինել, ինչպէս Ամերիկայինը, բայց նա անբաւարար կերպով է սերմանվում, մշակվում և մաքրվում։ Ուստի փոխանակ առաջնակարգ տեղ բռնելու միւս բամբակների շարքում, նա ներկայումս միջակներից աւելի ստոր աստիճանի վրա է կանգնած։

Առաջիկայ համագումարը հանդէս է

բերել մի շարք հերթական կարեւոր խնդիրներ՝ վերաբերեալ մեր երկրի բամբակագործութեան զարգացմանը։ Եւ, անկասկած, մեր երկրի բամբակագործութեամբ հետաքրքրվող և զբաղված մարդկանց համար բացված է առիթ և ասպարէզ՝ արտայայտվելու տեղական կարիքների մասին և պաշտպանելու բամբակագործութեան զարգացման շահերը։

Եւ այդ նրանք պէտք է անեն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սեփ. հեռագիր)

Մօսկվա, 27 նոյեմբերի

«Новое Время»-ի վերջին համարում տպված է Մեսրոպ եպիսկոպոսի խօսակցութիւնը այդ թերթի աշխատակցի հետ։ Խօսակցութիւնը վերջանում է նրանով, որ Մեսրոպ եպիսկոպոսը յայտնել է թղթակցին, թէ ինքը Պետերբուրգում եղած ժամանակ տեսակցել է պետական և հասարակական շատ գործիչների հետ, որոնց խօսակցութիւնից այն տպաւորութիւնն է ստացել, որ հայերին ներկայումս հետաքրքրող հարցը վառ կերպով զբաղեցնում է մեր վարչական շրջաններին, որոնք, ինչպէս երևում է, մտադիր են մօտ ապագայում հրապարակ հանելու։

Լեոն Մուշեղեան

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

26 նոյեմբերի

Վիէննա.—Լրագիրները հաղորդում են, որ Բէլգրադի աւստրո-ունգարական դեսպանը յայտնել է սերբիական կառավարութեան, որ Աւստրո-Ունգարիան ցանկանում է առաջվայ նման Սերբիայի հետ բարի յարաբերութիւններ պահպանել։

Իտալիայի և Գերմանիայի դեսպաններին յանձնարարվեց մատնանշել սերբիական կառավարութեան, որ Սերբիայի երևալը Ադրիատիկ ծովում հակասում է եռապետեան դաշնակցութեան շահերին։

—

Բուդապեշտ.—Աւստրիական պատգամաւորութեան արտաքին գործերի մասնաժողովի մէջ գերմանացի պատգամաւոր Լանգէնհանը խօսեց այն մտքով, թէ Աւստրիան տնտեսական քաղաքականութիւն է վարելու բալկանեան պետութիւնների վերաբերութեամբ։ Աւստրիան, ունենալով կենսական շահեր Ադրիատիկ ծովում, չը պէտք է կասկած թողնէ սերբերի մէջ՝ թէ Ալբանիան պէտք է մնայ Սերբիայի ազդեցութեան շրջանից դուրս։

Կրամարժը կողմնակից է բալկանեան հարցի վերջնական լուծման. Ալբանիան պէտք է բաժանվի Չերնոգորիայի, Սերբիայի և Յունաստանի միջև, status quo-ի հետ միասին վերանում է և հովանաւորութեան խնդիրը. Ռումինիան պատերազմի ժամանակ գրաւեց բարեացակամ դրութիւն. ամենքը, մանաւանդ բալկանեան դաշնակցութիւնը և Բոլգարիան հարկաւ գնահատելու են այդ։ Կ. Պոլիսը չը պէտք է դառնայ նորից Թիւրքերի կենտրոնատեղի և լաւագոյն դէպքում կարող է լինել բաց քաղաք։ Սերբիան իր հերթին մուտք ունենալով դէպի Ադրիատիկ ծովը պէտք է մեծ բարեացակամութիւն ցոյց տայ աւստրիական տնտեսական շահերի նկատմամբ։ Աւստրիան էլ բացի նոր արտաքին քաղաքականութիւնից, կարիք ունի խելացի ներքին քաղաքականութեան հարաւային սլաւօնների վերաբերմամբ։

Աւստրիական պատգամաւորութեան զինուորական մասնաժողովը ծովային բիւջէն ընդունեց։

Ծովային ուժերի հրամանատար Մոնտէկուկոլին ասաց, որ երրորդ դրեդնոուտը ծով կիջնէ նոյեմբերի 17-ին, չորրորդը՝ 1913 թ. յուլիսին. «Հարևան երկիրներում կատարվող ողբերգութիւնը ապացուցանում է, թէ որ աստիճանի մեծ է պատերազմական ուժերի նշանակութիւնը ծովի և ցամաքի վրա։ Պատրաստվենք վաղորօք»։

Աւստրիական պատգամաւորութեան մասնաժողովի մէջ գերմանացի մի արմատական յայտնեց, թէ Թիւրքիային բաժան-բաժան անելը և նոր սլաւօնական մեծ պետութեան երևալը գերմանացի նացիօնալիստների տեսակէտից անհաճելի դէպք է։

Մասնաժողովը վերջում վստահութիւն յայտնեց արտաքին գործերի մինիստրի քաղաքականութեան, ընդունեց նրա բիւջէն։

—

Հռոմ.—Պաշտօնական աղբիւրից տեղեկացնում են, որ Աւստրիան յայտնել է Իտալիային՝ թէ առարկելու է Սերբիայի Ադրիատիկ ծով մտնելու դէմ.

Պաշտօնական «Տրիբունան» համակրանք յայտնելով Պուանկարէի բանաձևին, տարակուսում է, թէ ինչ շարժառիթներից դրդված Աւստրիան մերժեց միանալ նրան։ Եթէ Աւստրիան գիտակցում է այն դժուարութիւնները, տեսնելով Չերնոգորիայի և Սերբիայի մտադրութիւնները ընդլայնելու իրանց երկիրը ի հաշիւ Ալբանիայի, այդ հարցը Աւստրիան պէտք է լուծէ Իտալիայի հետ միասին. իսկ եթէ ներկայ դէպքում խօսքը վերաբերում է տնտեսական հարցերին, այդ տեսակէտից էլ հիմք չը կայ արգելառիթ հանդիսանալ եւրոպական դիպլօմատիայի համաձայնութեան գործին։

—

Բերլին.—Սան-Ջուլիանոյի, Կիդերլէն-Վեխտէրի և Բէտման-Հոլվէգի խորհրդակցութիւնների ժամանակ յաճախակի մասնակցում էր աւստրո-ունգարական դեսպանը։

—

Բերլին.—Վոլֆի գործակալութիւնը հաղորդում է. «Մինիստր Սան-Ջուլիանոյի ներկայ այցելութիւնը Բերլին պարզեց լիովին Իտալիայի և Գերմանիայի ընդհանուր գործելակերպը բալկանեան գործերի վերաբերութեամբ։ Դաշնակից կառավարութիւնները գտնվում են լիակատար համաձայնութեան մէջ։ Պարզվեց, որ Գերմանիան և Իտալիան մտադիր չեն ազդել Բալկաններում կատարվող դէպքերի զարգացման վրա, մինչև որ այդ մասին չը խնդրեն շահագրգիռ կողմերը կամ թէ չը պահանջեն իրանց անմիջական շահերը»։

—

Բերլին.—Իտալական թագաւորը սրտագին շնորհակալութիւն յայտնեց կայսրին Սան-Ջուլիանոյին ցոյց տրված ընդունելութեան համար։

—

Վաշինգտոն.—Երկու զրահատար յածանաւ անմիջապէս գնում են թիւրքական ջրերը ամերիկացիներին պաշտպանելու համար։

—

Նիւ-Եօրկ. — Վիլսոնը յաղթութիւն տարաւ 48 նահանգներից 40-ի մէջ։ Ստացաւ 442 ձայն պատուիրակներից կամ 6.192,000 ձայն ընտրողներից։ Ռուզվէլտն ստացաւ 77 ձայն պատուիրակներից, Տաֆտը՝ 12։ Սօցիալիստներն ստացան 100 հազարով ընտրողների ձայներ աւելի քան նախկին ընտրութիւններին։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

26 նոյեմբերի

Կ. Պոլիս.—Մինիստրների խորհրդի նիստն է։ Շինութիւնը շրջապատել է մեծ ամբոխ։

«Մ. և Ա.» կոմիտէի պարագլուխները այցելեցին մեծ վէզիրին և պնդեցին պատերազմի շարունակութեան վրա մինչև վերջին ծայրայեղութիւնը։

Լուրերի համաձայն՝ Քեամիլ փաշան հրաժարականի խնդրագիր է ներկայացրել։

Նորատունկեանը հրաւիրեց դեսպաններին Բ. Դուռ, հաղորդեց զինուորական գործողութիւնների հետևանքների մասին, յայտնեց, որ կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնէ պահպանելու կարգ ու կանոնը։ Քեամիլը ներկայ էր ժողովին։

Զինուորական մինիստրութիւնը և գլխաւոր շտաբը խնճոյք կազմեցին։

Կ. Պոլսից աքսորվեցին 4000 մահմեդական գաղթականներ։

Թիւրք զօրքերը ընդհարվեցին յունաց հրոսակախմբի հետ Դէդէաղաչի մօտերը՝ Կարապինովա գիւղում։ Հայդուկները ռումբեր նետեցին։ Կան սպանվածներ և վիրաւորներ։

Բ. Դուռը հեռագիր ստացաւ Մոնաստիրի վալիից, թէ Թիւրքերը ձեռք են ձգել 7 թնդանօթ. նաև Կիչեվում ոչնչացել է սերբիական մի հեծելագունդ։ Երկու հեռագիրներն էլ առանց թիւ են։

Եկաւ ֆրանսիական «Դամբէտտա» զրահանաւը ծովակալ Դարտիժ-դէ-Ֆուռնիէի դրօշակով։

Բոլոր հիւպատոսարանները վարձում են առեւտրական նաւեր իրանց հայրենակիցներին անկարգութիւնների ժամանակ վերցնելու համար։

Պատերազմի դաշտից եկած բոլոր զինուորական թղթակիցները միաբերան վկայում են, որ թիւրքաց զօրքը գլխովին կազմալուծված է, մթերքներ չը կան, ռազմամթերքների ու սպառազինման բացակայութիւն է։ Շատ վիրաւորվածները մնում են կռւի դաշտում և հազարներով մահանում են իրանց տեղերում. միայն թեթև վիրաւորվածները գալիս են մայրաքաղաք և բժշկվում են։ Զօրքը վճռել է դիմադրել մինչև վերջ։ Նազըմ-փաշան տեղեկացրել է, որ զօրքը կապատամբէ հաշտութիւն կնքելու դէպքում։

Անգլիական մի յածանաւ անթել հեռագրով տեղեկացաւ Սալօնիկը վերցնելու մասին։

Եկաւ գերմանական մի յածանաւ։

Մահմուդ-Շէվքէթ-փաշան նշանակվեց արևելեան զօրքի ընդհանուր հրամանատար։

—

Լոնդօն.—Բէյտերի տեղեկութիւնների համաձայն՝ Բոլգարիան մտադիր չէ պատերազմից յետոյ մնալ Կ. Պոլսում։

—

Լոնդօն.—«Թայմսին» հեռագրում են Սօֆիայից, որ բոլգարական զօրքերը գրաւել են Չաթալջայի գիծը։ Պաշտօնական վաւերացումն չը կայ։

—

Սօֆիա.—Ներքին գործերի մինիստրութիւնը պատուիրագրեց Պեխչեվի, Մուստաֆա-փաշայի, Կիրջալիի, Քըրկ-Քիլիսէի, Մալատիրնովի, Գօրնի Ջումայի, Լիւլէ-Բուրգասի, Բաբա-Էսկիի, Վիզայի, Վասիլիկոյի, նոյնպէս վերջերս նշանակված կառավարիչներին կազմել բնակիչների ցուցակները ժամանակաւորապէս քաղաքային ինքնավար խորհուրդներ ընտրելու համար։ Բոլգարական հողային բանկը յիշեալ քաղաքներում գործակալներ է նշանակում ազգաբնակութեան քայքայված տնտեսութեան վերակազմութեանը նպաստելու համար։ Նշանակվեցին պօստ-հեռագրական ծառայողներ գրաւված նահանգներում։

Եկաւ ռումինական սանիտարական խումբ։

—

Ցետինիէ.—Բոյիանա գետի հովտում երկրորդ օրն է ուժեղ անձրևներ են։ Ամբողջ տարածութիւնը ջրի մէջ է։

Գեներալ Մարտինովիչը զօրքերը այդ տեղից առաջ տարաւ դէպի Ալէսիա։ Օգտվելով այդ հանգամանքից՝ թիւրքերը փորձեցին յարձակման դիմել, բայց ցիր ու ցան արվեցին խոշոր կորուստներով։ Չերնոգորցիք կորցրին 20 սպանված ու վիրաւոր։

Ցետինիէում մեծ քանակութեամբ ձիւն եկաւ։

—

Աթէնք.—Կորֆու են բերել 812 թիւրք զինուորի 52 օֆիցէրների հետ, որոնք գերի ընկան Պրեվէզայի մօտ։

Պատերազմի դաշտը մեկնեցին գարիբալդիցիները Գարիբալդիի առաջնորդութեամբ։

1912 թ. նորակոչներին զինուորական ծառայութեան կոչելը յետաձգվեց դեկտեմբերի 1-ին։

(Ճեպընթաց)։ Գահաժառանգ արքայորդին մտաւ Սալօնիկ։ Այնտեղ հասաւ նաև թագաւորը։ Քաղաքը հրավառվեց Սալօնիկը վերցնելու տեղեկութեան առիթով։

Սալօնիկի վալին առաջարկեց մաքրել քաղաքը թիւրք զինուորներից։ Գահաժառանգը մերժեց և գրաւեց քաղաքը բերդապահ զօրքի աննշան դիմադրութիւնից յետոյ։ Լուրերի համաձայն՝ վալին ինքնասպանութիւն է գործել։

—

Պետերբուրգ.—Բալկան են մեկնում սանիտարական խմբեր Պոլտավայից, Արխանգելսկից և Տվէրից։

—

Մօսկվա.—Գուչկովը իբրև լիազոր Կարմիր Խաչի մեկնեց Բէլգրադ։

—

(Լրագիրներից)

Կորֆուն գրաւվեց յոյներից։

—

Զօրլու - Սարայ ճակատամարտում թիւրքերը գլխովին ջարդվեցին։

—

Սան-Ջուլիանոյի և կոմս Բերխտոլդի միջև համաձայնութիւն կայացաւ Ալբանիան անկախ իշխանութիւն դարձնելու վերաբերութեամբ։

—

Բերլինից հեռագրում են, որ բոլգարական զօրքերը տիրել են Կ. Պոլսին ջուր մատակարարող ջրամբարին։

—

Լիւլէ-Բուրգասի մօտ թիւրքական դիրքերի վրա գնդակահարված 100 փախստական զինուորից 52-ը եղել են հայեր, յոյներ, բոլգարներ և հրէաներ։

—

Թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ՝ Անատոլիայում սկսվեցին պատգամաւորական պալատի ընտրութիւնները։

—

Կ. Պոլսում սուլթանի նախագահութեամբ պալատում կայացած արտակարգ խորհրդին քրիստոնեաներից հրաւիրված էին սենատորներ Վլախս Բացարիս և Ազարեան էֆէնդի։

—

Քեամիլ - փաշան վերջնականապէս հրաժարվեց կաբինէտ կազմել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՕՆՆԵՐ*)

III

Մեր նախորդ տեսութիւնների մէջ մենք ցոյց տուինք, որ ներկայ արիւնահեղ պատերազմի իսկական յանցաւորը՝ մի կողմից եւրոպական դիպլօմատիան է, որ իր քարասիրտ և էգօիստ քաղաքականութեամբ ամբողջ 34 տարի խուլ ձևացաւ Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնների ողբերի և աղաղակների առաջ և չը հարկադրեց օսմ. կառավարութիւնը՝ իրագործել խոստացված րէֆօրմները, իսկ միւս կողմից «երիտասարդ-թիւրքերն» են, որոնք իրանց ձախորդ քաղաքականութեամբ՝ «օսմանցիացնելու» Թիւրքիայի ոչ-իսլամ ազգութիւնները՝ պատմական անհրաժեշտութիւն դարձրին պատերազմը։

Սլաւեան ազգերը այլևս չը կամեցան մնալ Եւրոպայի խնամակալութեան ներքոյ, լսել նրա խրատները և, թոթափելով այդ խնամակալութեան լուծը, կամեցան իրանց սեփական ուժով լուծել իրանց պատմական վէճը իրանց դարաւոր ոսոխի թշնամու հետ։

Բայց ինչպէս ընդունեցին եւրոպական մեծ պետութիւնները սլաւեան ազգերի այդ խիզախ քայլը։

Նրանք շտապեցին յայտարարել, թէ որոշել են պահպանել status quo-ն Բալկաններում, ինչ և լինի պատերազմի ելքը, այսինքն՝ որ թոյլ չեն տալու Թիւրքիայի վիճակի մէջ որևէ փոփոխութիւն, այլ պահպանելու են նախկին կարգը։ Նրանք այսպէս էին մտածում. «Ի՞նչ հոգ, թող Թիւրքիան և բալկանեան երկիրները կռւեն, արիւնաքամ լինեն. մենք միշտ կարող ենք կանգնեցնել նրանց, հէնց որ նրանցից մէկը չափից դուրս գայ, ինչպէս կանգնեցրինք Ռուսաստանը, երբ նա 1878 թ. մօտեցաւ Կ. Պոլսին. մէջտեղ էլի մենք կօգտվենք»։

Բայց ինչու է կամենում ծերունի Եւրոպան անխախտ պահպանել status quo-ն։ Շատ պարզ է. քաղաքականութիւնը՝ մօրալ չէ ճանաչում. նա ճանաչում է միայն սեփական շահ։ Արդ, յայտնի է, որ Թիւրքիայի ամբողջ գոյութիւնը վերջին տասնամեակներում (Բերլինի դաշնագրից յետոյ մանաւանդ) ամբողջովին պահպանվում էր անգլիական, գերմանական և ֆրանսիական կապիտալներով։ «Այդ ուժով էր պահպանվում «կարմիր սուլթանի» իշխանութիւնը,—ասում «Рус. Вѣд.»-ի թերթը։—Այդ դրամագլխով էր թափվում հայերի և մակեդոնացիների արիւնը։ Բայց դիպլօմատիայի ներկայացրած կապիտալը ծածկում է միայն բարոյականութեան մասին եղած ամեն մի յիշատակութիւն»։

Եւ ճշմարիտ՝ վերցնենք միայն Ֆրանսիայի շահերը Արևելքում և մենք կը համոզվենք, թէ ինչու Ֆրանսիան կամենում է պահպանել status quo-ն Թիւրքիայում. և մենք կը համոզվենք, թէ որքան միամիտ էինք մենք հայերս, որքան միամիտ էին այն հայ գործիչները, որոնք խօսում էին ֆրանսիացիների վեհ մարդասիրութեան, արդարութեան մասին։

Ֆրանսիական «Թան» լրագրի մէջ տպված է մի յօդուած, որ ցոյց է տալիս, թէ որքան դրամագլուխ է դրել Ֆրանսիան Թիւրքիայում։ Վերջինս փոխառութեամբ պարտք է վերցրել Եւրոպայից 1204 միլիօն. այդ գումարից 846 միլիօնը՝ Ֆրանսիան է տուել։ Երկաթուղիների մէջ Ֆրանսիան մտցրել է՝ Զմիւռնիա Կասսաբայի գծի մէջ՝ 71 միլ., Եաֆֆա Երուսաղէմի՝ 18 միլ., Դամասկոս-Համախի՝ 121 միլ., Բաղդադի՝ 5 միլ., Սալօնիկի՝ 121 միլ.։ Ապա Էրէյլիի հանքերի մէջ դրել է 29 միլիօն, Սալօնիկի հանքերի՝ 600,000 ֆրանք, Զմիւռնիայի ծովափերի կառուցման վրա դրել է 11 միլ., Կ. Պոլսի՝ 37 միլ., Բէյրութի՝ 14 միլ., իսկ Կ. Պոլսի ջրանցքի վրա՝ 17 միլ., ծխախոտի մենաշնորհի վրա՝ 16 միլիօն։ Այս թիւը,—ասում է լրագիրը,—լրիւ չէ, բայց ֆրանսիական կապիտալների ընդհանուր գումարն անցնում է 2 միլիարդ ֆրանկից, մէկ ու կէս միլիարդ աւելի, քան Գերմանիայի դրած կապիտալը Թիւրքիայում։ Ուստի,—ասում է «Թան» լրագիրը, որ հանրապետական կառավարութեան բերանն է համարվում,—«Ֆրանսիան չը պէտք է մոռանայ իր ազգային շահերը, երբ խօսք է լինում հանրամարդկային շահերին ծառայելու մասին». այսինքն ամենից առաջ պէտք է ի նկատի ունենալ, որ Ֆրանսիայի շահը պահանջում է, որ Թիւրքիայում status quo լինի։

Նոյնը և Գերմանիան, Աւստրիան, Անգլիան։ Ուստի շատ բնական է, որ այդ երկիրներն ևս կողմնակից են status quo-ի պահպանութեան։

Ամենից քիչ նիւթական շահեր ունի և ամենից քիչ կապիտալ է դրել Թիւրքիայում Ռուսաստանը, հետևաբար պէտք էր սպասել, որ գոնէ Ռուսաստանը յայտնապէս պաշտպան դուրս գար բալկանեան ազգութիւնների շահերին և խրախուսէր նրանց ջանքերը՝ գտնելու իրանց վերջնական ազատութիւնը։ Չէ՞ որ Ռուսաստանը իր տասնեակ հազարաւոր զաւակների արիւնը թափեց բոլգարների, սերբերի, չերնոգորցիների համար. չէ՞ որ Բոլգարիան Ռուսաստանի ծնած զաւակն է, չէ՞ որ նրան կեանք տալու համար՝ Ռուսաստանը ազգային զոհեր տուեց. չէ՞ որ դեռ այսօր ևս խեղճ ռուս մուժիկը վճարում է «արևելեան փոխառութեան» տոկոսները, տոկոսները այն միլիօնների, որ Ռուսաստանը ծախսեց 1877—78 թ.։ Բայց Ռուսաստանն ևս միացաւ եւրոպական կոնցերտին և նոյնպէս յայտարարեց, թէ պէտք է պահպանել status quo-ն։

Սակայն այդպէս յայտարարեց պաշտօնական Ռուսաստանը, այդպէս յայտարարեց ռուսական դիպլօմատիան։ Եւ նա ստիպված էր այդպէս վարվելու, որովհետև Ռուսաստանի միջամտութիւնը յօգուտ սլաւոնների կարող էր առաջ բերել ընդհանուր պատերազմ, համաեւրոպական պատերազմ, իսկ այդպիսի մի վիթխարի պատերազմի մէջ մտնելու համար Ռուսաստանը պատրաստ չէ. պէտք է սոսկալի մեծ զոհեր տալ և նորից քայքայել երկրի տնտեսական ու ֆինանսական դրութիւնը։ Բայց ոչ-պաշտօնական Ռուսաստանը այլ կերպ է մտածում, ռուս ժողովուրդը, ռուս հասարակութիւնը այնքան սերտ կապերով, կուլտուրական, հոգևոր-բարոյական կապերով կապված է սլաւեան ազգերի հետ, որ չէր կարող իր համակրութիւնը չը յայտնել, չէր կարող իր ուրախութիւնը չը յայտնել, երբ բոլգարները, սերբերը, չերնոգորցիները, յոյները միմեանց ետևից սկսեցին յաղթութիւններ տանել։ Եւ Ռուսաստանի հասարակական կարծիքը, անպայման, բալկանեան ազգերի կողմն է։ Նոյն իսկ Ֆրանսիայում, Անգլիայում, նոյն իսկ Աւստրիայում հասարակական կարծիքը սկսել է խօսել յօգուտ բալկանեան ազգերի։ Եւ այդ կարծիքը այնքան զօրեղ է, որ եւրոպական և ռուսական դիպլօմատիան այլ ևս չէ խօսում status quo-ի պահպանութեան մասին, այլ սկսում է հաշտվել այն մտքի հետ, որ Եւրոպական Թիւրքիայի բաժանումը անհրաժեշտ է, որ յաղթողները պէտք է պահպանեն իրանց զէնքով նուաճած երկիրները։ Այսօր Արևմտեան Եւրոպան այլ ևս արհամարհանքով չէ խօսում բալկանցիների մասին. Նրանց կայծակնահար արշաւանքներից յետոյ, այսօր բալկանեան այդ «պրուսացիների» առաջ՝ Արևմտեան Եւրոպան իր գլխարկն է հանում։ Այսօր այլ ևս հաշտվում են այն մտքի հետ, որ պէտք է ճանաչել բալկանեան դաշնակցութիւնը իբրև լիաիրաւատէր անդամ քաղաքակիրթ ազգերի ընտանիքի։ Թէև բալկանեան համաձայնութիւնը սկզբում կնքվել է Բոլգարիայի, Սերբիայի, Չերնոգորիայի և Յունաստանի միջև, ժամանակաւորապէս, որոշ նպատակների հասնելու համար, բայց, անկասկած, քանի որ այդ համաձայնութիւնը փառաւոր հետևանքներ տուեց, նա շարունակելու է գոյութիւն ունենալ և պատերազմից յետոյ և վերածվելու է բալկանեան պետութիւնների ֆեդերացիայի։

Ճիշդ է, Եւրոպան անվստահութեամբ և տհաճութեամբ է տեսնում այդ նոր ֆակտորի ծնունդը միջազգային քաղաքականութեան մէջ, բայց նա հարկադրված է վերջ ի վերջոյ հաշտվել այդ նոր մեծ ուժի հետ, բալկանեան ազգերի ֆեդերացիայի հետ, իբրև մի ուժի, որ ծնվել է պատմական անհրաժեշտութեան երկունքից։

Այդ նոր ուժը, այդ նոր գործօնը, տապալելով, վերջ դնելով օսմանեան իշխանութեանը Եւրոպայում, առաջ է բերելու նոր յեղաշրջումներ, որոնց հետևանքն այն է լինելու, որ թիւրքերը քշվելու են Փոքր-Ասիա։

Արդ, ինչ է լինելու հայ ժողովրդի և Հայաստանի դրութիւնը։

Այդ մասին յաջորդ անգամ։ Հ. Ա.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Այն, ինչ որ անուրջ էր թւում մի քանի տարի առաջ, այսօր կատարված իրողութիւն է։

Թիւրքիային հարուածում են սլաւօն մանր ազգութիւնների միացեալ ուժերը։

Սերբիա, Բոլգարիա, Չերնոգորիա և Յունաստան ձեռք-ձեռքի տուած դուրս են քշում Թիւրքիային եւրոպական մայր ցամաքից։

Պատերազմը շարունակվում է թէև, բայց և այնպէս նրա բաղդը արդէն վճռված կարելի է համարել։

Սակայն ինչպէս ծնունդ առաւ այդ յաղթական, Թիւրքիայի գերեզմանափոր դաշնակցութիւնը։

Որպէսզի հասկանալի լինի ընթերցողի համար, մի յետադարձ հայեացք ձգենք քաղաքական այն անցքերի վրա, որոնք տեղի ունեցան Բալկաններում չորս տարի առաջ, այսինքն հէնց այն օրերին, երբ դաշնակցութեան միտքն անգամ ծնունդ չէր առել, բայց որը շարժառիթ եղաւ ստեղծագործելու այն։

Մինչև 1912 թիւը բալկանեան սլաւօն ազգութիւններից իւրաքանչիւրը մի գեղեցիկ յոյս էր փայփայում՝ ձեռք բերել «հիւանդ մարդու» ժառանգութիւնը Եւրոպայում։

Այդ յոյսով տոգորված էին մանաւանդ Սերբիան և Բոլգարիան, որի շնորհիւ որոշ սառնութիւն էր տիրում երկու արքունիքների միջև։

Սերբիայի թագաւորը սլաւօնական տենչերի թարգմանն էր հանդիսանում, բայց իշխան Ֆերդինանդը մեծ կապեր ունէր եւրոպական արքունիքներում։

Եւ այդպէս՝ մրցութիւնը շարունակվում էր խուլ կերպով։

Այդ սառնութիւնը սաստկացաւ մանաւանդ 1908 թւականին, երբ Թիւրքիան ազատագրութեան երկունքի գալարումներն էր ապրում։

---

*) Տես «Մշակ» № № 237 և 238.

Այդ օրերին ցեղակից Բոլգարիան և Սերբիան բոլորովին իրար հակառակ դիրքեր էին գրաւել։

«Հիւանդ մարդու» կրիտիկական վիճակից Աւստրիան, ինչպէս յայտնի է, շտապեց օգուտ քաղել և գրաւեց Բոսնիան և Հերցէգովինան։

Այդ աննեկսիան մի անսպասելի, զգալի հարուած էր ոչ միայն Թիւրքիայի համար, այլ և առանձնապէս Սերբիայի և Չերնօգօրիայի համար, որոնց ձեռքից խլվում էին ժառանգութեան ամենաթանկագին պատառները։

Սերբիան բողոքեց այդ յափշտակութեան դէմ։ Ժողովրդական յուզմունքը այն աստիճանին հասաւ այնտեղ, որ Բէլգրադում համակրական օվացիաներ արին Թիւրքաց դեսպանութեան առջև, իսկ «Պոլիտիկա» թերթը հետևեալ կոչն ուղղեց ժողովրդին. «Սերբ ժողովուրդը ամբողջովին իբրև մի մարդ ցանկանում է ապրել բոսնեակների և հերցեգովինցիների հետ միատեղ կամ մեռնել պատերազմի դաշտում իր ցեղակիցների հետ միասին։ Ուստի մենք պահանջում ենք, որ սերբիական զօրքը անմիջապէս պատրաստվի բոսնիական սահմանագլուխն արշաւելու։ Թող Թագաւորը առաջնորդի մեզ պատերազմելու»։

Ինչպէս տեսնում էք, սերբ ժողովուրդը պատրաստ էր պատերազմ սկսել Աւստրիայի դէմ Բոսնիայի և Հերցէգովինայի համար։

Ի հարկէ, մենակ մի այդպիսի քայլ անելը նրա կողմից կը լինէր անմտութիւն։ Եւ նա, պատերազմի կոչ անելով, իր յոյսը դրել էր ոչ միայն իր ոյժերի վրա, այլ և Թիւրքիայի, Բօլգարիայի և Չերնօգօրիայի միացեալ ոյժերի վրա, բայց աւելի ևս Ռուսաստանի աջակցութեան վրա։

Այդ յոյսերը չարդարացան. մեծ պետութիւնները լռելեայն ընդունեցին կատարված փաստը, Թիւրքիան զիջեց, իսկ ցեղակից բօլգարական իշխանութիւնը դաւաճանեց սլաւոնական գործին՝ ի տրիտուր ստանալով թագ և իշխանութիւնը հռչակելով թագաւորութիւն։

Սերբիան մնաց մենակ։ Ահա այդ ժամանակ միայն նա զգաց, որ առանց Բօլգարիայի դաշնակցութեան անհնարին է սանձել Աւստրիայի ախորժակը, որը նոյնպէս գրգռված է «Հիւանդ մարդու» ժառանգութեան ակնկալութեամբ։

Մնում էր, որ մէկը միջնորդ հանդիսանար սլաւոն ցեղերի վարիչների մէջ տիրող սառնութիւնը վերացնելու և ղեկավարութիւն ստանձնէր նրանց միաբանեցնելու քաղաքական միջադէպերի համար։

Ուղղակի թէ անուղղակի կերպով առաջ եկաւ ներկայ դաշնակցութիւնը Թիւրքիայի մի նոր ճգնաժամի օրերին։

Թիւրք-իտալական պատերազմը հնարաւորութիւն տուեց մանր ազգութիւններին իրագործելու դաշնակցութեան խնդիրը և մի անգամ ընդ միշտ լուծելու ժառանգութեան հարցը և դրանով փակելու Աւստրիայի ախորժակը։

Այդ միտքը փայփայում էր Սերբիան, իսկ ի կատար ածելը վիճակվեց ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազոնովին։

Ներկայ պատերազմով քաղաքական հորիզոնի վրա հանդէս է գալիս մի նոր ոյժ յանձին այդ դաշնակցութեան։

Եւ ընդհանուր եւրոպական քաղաքական խմբակցութիւնների մէջ այդ ոյժը անկասկած սլաւոն ազգերի ձայնը աւելի ազդու և աւելի լսելի կը դարձնի։

Իսկ որ այդ այդպէս է, երևում է Աւստրիայի նահանջողական տրամադրութիւնից բալկանեան պետութիւնների ներկայ շարժման հարցում։

Սկզբնական սպառնալիքների տեղ, նա այժմ խօսում է մեղմ ու բարեհաճ լեզուով։

Այլ կերպ չէր էլ կարող լինել։

Լ. Դ.

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԵՆ

Դահլիճի փոփոխութիւն

Կ. Պոլիս, 18 հոկտեմբեր

Երկու օր առաջ յանկարծական կերպով փոխուեցաւ դահլիճը։ Ղազի Մուխտար փաշայի հրաժարականի վրայ իր վարչապետ ընտրուելուն հետևեալ օրը կը խօսուէր արդէն և միշտ իրեն հաւանական յաջորդը կը համարուէր Քեամիլ փաշա։ Սակայն այս վերջինը կանոնաւորապէս իրեն ներկայացող բոլոր թղթակիցներուն սովորութիւն ըրած էր ժխտել այս ենթադրութեանց ճշգրտութիւնը։

Տակաւին մէկ օր առաջ իր եպարքոս անուանելէն՝ լրագրողի մը հարցումին իբր թէ պատասխանելով պատկառելի ծերունին ըսած էր, թէ ոչ թէ ի մօտոյ, այլ դեռ 3—4 ամիս յետոյ ալ ինքը վարչապետ չպիտի ըլլայ։

Հակառակ այս յայտարարութիւնը այն օրը իսկ հրատարակուած ըլլալուն, իրիկունը շատ ուշ ատեն, արևուն մայրամուտին մօտ, Քեամիլ փաշա եպարքոսական թափօրով Բարձրագոյն Դուռ մտաւ։ Քեամիլ-փաշա, կեանքի մայրամուտին մօտեցած 80-ամեայ ծերունի մը, պատկառելի և ահազդեցիկ կայսրութեան մը ճգնաժամային մէկ րոպէին, կուգայ գործերու ղեկը իր ձեռքն առնել։

Մահուան մօտեցող մարդ մը՝ մահամերձ կայսրութեան մը վարիչը կը դառնայ... մայրամուտի ցոլքերուն մէջ։

Ի՞նչ խորհրդաւոր զուգադիպութիւն։ Քեամիլ փաշա իր քաղաքական դաւանանքովը ճանչցուած է բացարձակ անգլիասէր մը։ Քեամիլ փաշայի վարչապետութեան կոչուիլը Բ. Դրան մէջ անգլիական դեսպանին բացարձակ ազդեցութեան հոմանիշ է։

Առանց սակայն այս փոփոխութեան ալ արդէն Ղազի Մուխտար փաշայի դահլիճն, որուն ոգին կը կազմէին Քեամիլ փաշա և Նորատունկեան էֆէնդի, ամեն կերպով անգլիասէր տրամադրութիւններ ցոյց կուտար։

Հիմա՝ շրջած զրոյցներուն համաձայն՝ Քեամիլ փաշայի վարչապետ կարգուելուն որոշում տրուած է այն մեծ խորհուրդին մէջ, որ անցեալ շաբաթ գումարուած էր կայսերական պալատին մէջ։

Այս կարգադրութիւնը միայն երկու կերպ կրնայ մեկնուիլ։

Կամ պահանջումի մը հետևանք է, կամ մատուցումի մը նշան։

Պահանջումը, շատ պարզ է հասկնալ, Անգլիոյ կողմէ կրնայ եղած ըլլալ։ Շատ հաւանական է կարծել, թէ պատերազմին առաջած շատ ձախող հետևանքին պատճառով Բ. Դուռը՝ հնօրեայ աւանդութեան մը համաձայն՝ դիմած ըլլայ Անգլիոյ աջակցութեանը այս տագնապէն զինքը ազատելու համար։ Անգլիական կառավարութիւնը հաւանական է, որ այս տեսակ դիմումի մը ի պատասխան պահանջած ըլլայ Քեամիլ փաշայի վարչապետութեան կոչուիլն և իր համախոհներէն դահլիճ մը կազմելը։

Ասիկա առաջին հաւանականութիւնն է։ Երկրորդը սա է, որ կրնայ ըլլալ, որ Թիւրքերն իրենք ինքնաբերաբար որոշած են Քեամիլ փաշա վարչապետ դարձնել՝ շահելու համար գէթ Անգլիոյ համակրութիւնը, քանի որ պատերազմի ընթացքէն բացորոշաբար կը հասկցուի, թէ Թիւրքիոյ պարտութիւնը անխուսափելի է։

Եւրոպական դիւանագիտութեան կողմէ միջնորդութեան ձեռնարկներ կատարուելուն արդէն կը գրեն եւրոպական թերթեր, սակայն հոս Բ. Դրան շրջանակներու մէջ կը հաւաստուի, թէ Բ. Դուռն ինքը կը մղէ արդէն միջամտութեան մը գետինը, կամ տարբեր բառով՝ կը խնդրէ օտար միջամտութիւն, իբր միակ ելք փրկութեան։

Այս երկու կարծիքներէն որը ճիշդ ըլլալը պարզել հիմա այս պահուս կարելի չէ, սակայն ի մօտոյ անշուշտ պիտի պարզուի։

Պատերազմին ընթացքը ցոյց կուտայ, թէ միջնորդութեան ժամը հասած է, և Թիւրքիա նուազագոյն վնասովը ազատելու համար այս պատերազմէն՝ կը կարօտէր իրեն բարեկամ պետութեանց համակրութեան արժանացած դահլիճի մը, որ չէր կրնար Քեամիլ փաշայէն զատ ուրիշ մը կազմել։

Քեամիլ փաշայի դահլիճին մէջ իրենց պաշտօնները պահեցին պատերազմական մինիստր Նազըմ փաշա, արտաքին գործերու մինիստր Նորատունկեան էֆէնդի և առևտրական գործոց մինիստր Րէշիտ փաշա, իսկ ներքին գործերու մինիստր Ալի Դանիշ-բէյի յաջորդեց Զմիւռնիայի կուսակալ Րէշիտ բէյ, երբեմն խմբագիր Իթթիհադական կառավարութեան կատաղի հակառակորդ «Շէհրար» լրագրոյն։

Այս անուանումը շատ նշանակելի է։ Դահլիճը այս կերպով կը ստանայ կատարելապէս իթիլաֆական դահլիճի մը գոյն։ Պէտք չէ մոռնալ, թէ Իթիլաֆը կազմակերպուած է ընդդէմ Իթթիհադի՝ անգլիական դեսպանատան պաշտպանութեան և քաջալերութեան տակ, Քեամիլ փաշա վարչապետ դարձնելու հաստատ մտադրութեամբ։

Այն ատեն շատ կրկնուեցան սա խօսքերը, թէ անգլիական դեսպանատան առաջին թարգման պ. Ֆից Մորիս Իթիլաֆի կազմակերպութեան մէջ մեծ դեր կատարած է։ Իթթիհադական կառավարութիւնը այն ատեն պահանջեց պ. Ֆից Մորիսի մեկնումը։ Անգլիական կառավարութիւնը իբր առժամեայ հիւպատոս Տրիպոլիս՝ հոն փոխադրեց, սակայն երբ Իթթիհադական կառավարութիւնը ինկաւ, անմիջապէս իր նախորդ պաշտօնին մէջ վերահաստատեց պ. Ֆից Մորիսը։

Իթիլաֆին պաշտօնի անցնիլն այս կերպով յաղթանակը կը դառնայ անգլիական կառավարութեան, և կը տեսնուի թէ գերման ազդեցութիւնը վերջնապէս փչացած է այլևս։

Դահլիճին մէջ կը մտնէ Զիա փաշա, ամենապատուական անձնաւորութիւն մը, որ Ղազի Մուխթար փաշայի դահլիճը կազմուած ատեն երկու օր ելեմտական մինիստրը և քանի մը օր ալ ներքին գործերու մինիստրի պաշտօն վարեց և յետոյ հրաժարեցաւ՝ կուսակալներն իր պատասխանատուութեան տակ անուանելու թոյլ չտրուելուն համար, Հիւսէյին Հիլմի փաշայի ինտրիգներովը։

Այս դահլիճը իր ներկայ կազմով որքան պատերազմը վերջացնելու, նոյնպէս Իթթիհադականութիւնը երկրէն արմատախիլ ընելու կարծես թէ պաշտօն ունի։

Ասիկա ալ մի երկրորդ յաղթանակն է անգլիական քաղաքականութեան, որ Քեամիլ փաշայի անկումէն յետոյ ամեն բան ըրաւ Իթթիհադը տապալելու և ջնջելու համար։

Այս կերպով Թիւրքիա իր ճակատագիրը կը յանձնէ Անգլիոյ, սակայն Թիւրքիոյ մէջ դիտուած իրողութիւն մըն է միշտ՝ նեղ օրերու մէջ ապաստանիլ օտարին, խոստանալ առատօրէն և յետոյ ուրանալ մեր զիջումներն և խոստումները։

Նոյնը կրնայ պատահիլ հիմա, երբ ճգնաժամ մը կանչնէ կայսրութիւնը և Եւրոպայէն դուրս վտարուելու վտանգին տակ կը գտնուի։

Ամեն պարագայի մէջ՝ շատ սխալ պիտի ըլլայ վստահիլ Թիւրքիոյ խոստումներուն, կամ հաւատալ անոր եղբայրակցական զգացումներուն։ Թիւրքիա եղբայրանալու կրնայ ըլլալ շատ շուտով և շարունակել իր նախորդ ոճիրներն ու անքաւելի նախճիրները, որոնք դեռ պատերազմի օրերուն չեն մոռցուած։

Հելլէն բանակը Սերֆիճէ մտնելէն առաջ՝ Թիւրք խուժանը քաղաքին յոյները ջարդած է չարաչար։ Նոյն ջարդարարութիւնները կը կատարուին նաև ուրիշ քաղաքներու մէջ։

Օսմ. բանակատեղոյն—Լիւլէ-Բուրգազ—մէջ, ուր ամենէն աւելի կարգապահութիւնը պարտաւորիչ պէտք էր ըլլար, զինուորները շուկան թալանած են, երբ նախատինք քաղաքակրթութեան։

Տակաւին այս կիրակի Կ. Պոլիս անցուցած է ծանր վտանգ մը, ինչպէս կը հասկցուի բերնէ-բերան շրջած զրոյցներէ և ձեռք առնուած զսպողական միջոցներէ։

Քրիստոնեաներու դէմ ընդհանուր ջարդի մը համար կըսուի թէ Ֆէթվա էմինին (շէյխ-իւլ-իսլամութեան այն պաշտօնատարը, որ իսլամական օրինաց մեկնիչը և վճռատուն է. կայսրներ գահընկէց ընելու համար, միշտ այս պաշտօնեային վճիռն անհրաժեշտ և կարևոր է, երբ անվերաքննելի վճիռ ու որոշում) դիմում ըրած են, վճիռ ձեռք բերելու համար, և ասիկա յօժարած է տալու այս որոշումը։

Սակայն կըսուի թէ կառավարութիւնը ճիշդ պէտք եղած վայրկեանին տեղեկացած է սպառնացող վտանգին և վայրկենապէս պաշտօնանկ ըրած է Ֆէթվա էմինին և քանի մը ուրիշ համախոհ պաշտօնատարներ, ինչպէս հրատարակուեցաւ լրագրաց մէջ։

Նոյնպէս սաստկացուեցաւ պաշարման վիճակը։ Հիմա մայրաքաղաքին մէջ գիշերուան ժամը 10-էն յետոյ արգիլուած է փողոցը շրջագայիլ, և շրջան պահակներ ամեն կողմ կը պտտին։

Ջարդին նախաձեռնարկ ըլլալու տրամադրուած են եղեր, շրջած զրոյցի մը համաձայն, մայրաքաղաքիս քիւրդ բեռնակիրները, որոնց դաս մը ըլլալու համար—կամ ուրիշ բացատրութեամբ մը... կառավարութիւնը օգտուելու համար անոնց ցոյց տուած հայրենասիրութենէն—անոնցմէ կազմուած է կամաւորներու գունդ մը, որ պիտի ղրկուի պատերազմի դաշտը։

Ասոնք ցոյց կուտան, թէ տակաւին Թիւրք մտայնութեան մէջ տիրապետող է վայրենութիւնը և հին այն կործանարար բնազդը, որ կոտորելով, կողոպտելով և աւերի տալով միայն յագուրդ կրնայ գտնել։

Շաւալ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Գրական սալօնի երեկոյթը, որ կայացաւ ուրբաթ, 26 հոկտեմբերի, նուիրված էր դրամատուրգ իշխան Սումբատովի յոբելեանական տօնին և միւս վրացի հեղինակների յիշատակին։

Տ. Նազարեան, բանալով երեկոյթը, առաջարկեց ընտրել նախագահ, որպիսին ընտրվեց Ալ. Քալանթար։

Հաւաքվել էին մինչև 70 հոգի հայ, վրացի և ռուս ինտելիգենցիայից։

Ա. Քալանթար ծանօթացրեց հանդիսականներին երեկոյթի ծրագրի հետ և յայտնեց, որ ցանկացողները կարող են մասնակցել երեկոյթի ծրագիրը լիակատար դարձնելու նպատակով։

Երեկոյթը բաղկացած էր երկու մասից։ Երաժշտական մասի մէջ հանդէս եկաւ երգիչ Բրօջի, որը երգեց իտալերէն գեղեցիկ երկու կտորներ։

Ա. Քալանթար, խօսելով «Մշակի» խմբագրութեան կողմից, ողջունեց դրամատուրգ իշխան Ա. Ի. Սումբատովի յոբելեանը, ընդգծեց նրա տաղանդի բնաւորութիւնը, ցոյց տուեց նրա մատուցած ծառայութիւնը ռուսական թատրոնին և կենտրոնացրեց յատուկ ուշադրութիւն նրա գործունէութեան այն մասի վրա, որը վերաբերում է Կովկասին, և կանգ առնելով նրա այն երկերի վրա, որոնք շօշափում են կովկասեան անցեալը և ներկան, որոշ տեղ շնորհեց «Դաւաճանութիւն» պիէսին, որը կազմում է թէ վրաց և թէ հայ թատրոնական ռեպերտուարի զարդերից մէկը։ Այնուհետև յիշատակելով միւս վրացի գրական գործիչներին՝ ընդգծեց, որ վրացի հեղինակները թանկագին են և հայերի համար, իբրև պատմական եղբայրակիցների և կենակիցների, որոնք ապրում են նոյն կեանքով, նոյն հասկացողութիւններով և Կովկասի գեղարուեստական դիւթումներից նոյն տպաւորութիւններով։ Մտաւոր գործիչները՝ գեղարուեստագէտները, ժողովրդական ստեղծագործութեան ներկայացուցիչները կը միացնեն մեզ բոլորիս լուսաւոր և համերաշխ քաղաքացիական կենցաղի վեհագոյն նպատակներ իրագործելու համար։

Ճառը ընդունվեց ծափահարութիւններով։

Նախագահը աւելացրեց, որ այսօր հիւրերի մէջ գտնվում է և մի մոսկվացի, որը լաւ ծանօթ է իշխ. Ա. Սումբատովին և եկել է ներկայ լինելու իր յարգած անձին նուիրված տօնակատարութեան երեկոյթին։ Դա Ալ. Բոր. Վինօգրադօվն է, որին մենք էլ ողջունում ենք մեր կողմից։

Վինօգրադօվը, խօսք խնդրելով, գրուատեց Մոսկվայի սիրելի դրամատուրգին, իբրև շնորհալի հեղինակի, խելացի դերասանի, բարձր կուլտուրական անհատի, համակրելի հասարակական գործողի։ Սումբատովը լայն կերպով հետաքրքրվում է կեանքով, մասնակցում էր ընտրական պայքարին, հովանաւորում է ուսանողներին, մասնակցում է վրացական երեկոյթների կազմակերպութեանը և ամեն մի բարեգործական նախաձեռնութեան։ Երբ ներկայացնում էին «Դաւաճանութիւն» օպերան, մոսկվացիները օգտվեցին դէպքից՝ համակրական ցոյցեր անելու ոչ այնքան օպերայի յօրինողին, որքան բնագրի հեղինակին՝ իշխան Սումբատովին։ «Ես ևս նրա ամենամեծ յարգողներից եմ ձեզ հետ միասին նուիրելու ժամեր նրա պատուին» (ծափահարութիւններ)։

Ց. Գասպարեան կարդաց հայերէն լեզուով մի զեկուցում Իլիա Ճավճավաձէի մասին և հաղորդեց հասարակութեանը հետաքրքրական տեղեկութիւններ հանգուցեալ բանաստեղծի և գրողի երկասիրութիւնների մասին, կանգ առնելով այն հեղինակութիւնների վրա, որոնք բնորոշ են Ճավճավաձէի գրչի համար։ Զեկուցման թէ սկզբում և թէ վերջում Ց. Գասպարեան խօսեց վրացերէն՝ ամփոփելով համառօտ կերպով իր զեկուցման էութիւնը։ Հանդիսականները յայտնեցին զեկուցանողին իրանց շնորհակալութիւնը ծափահարութեամբ։

Նախագահը, նուիրելով մի քանի խօսք Իլիա Ճավճավաձէին, այլ և յիշելով վրացի մի շարք հեղինակների և գործողների, որոնք մեռել են, օրինակ՝ Բարաթովին, Օրբելեանին, Էրիստովին, Գէօրգի Ծերէթելին, Գաբունիա-Ցագարելին, Գոգեբաշվիլին և ուրիշներին, առաջարկեց յարգել նրանց յիշատակը ոտքի կանգնելով։

Այնուհետև խօսք առաւ իշխան Իլիա Նակաշիձէ և արտասանեց յանպատրաստից մի զգացված գեղեցիկ ճառ։ Նա խօսեց ազգային բանաստեղծութեան և առհասարակ գեղարուեստական ստեղծագործութեան մասին, յայտնելով որ նրանց մէջ ուժգին խօսում է այս ու այն ազգի զգացմունքը և ուրեմն արտայայտվում է նրա տենչերի և խոհերի աշխարհը։ Իսկ դիտողութիւնը ցոյց է տալիս միևնոյն ժամանակ, որ ուժեղ ազգային ստեղծագործութիւնը միշտ խոր մարդասիրական բնոյթ ունի և ծնեցնում է դէպի ինքը յարգանք ուրիշ ազգերի կողմից։ Ուստի վեհ ազգայինը այն է ներկայանում, ինչ որ և հանրամարդկային է։ Եւ անտարակոյս, ազգի մէջ եղած անջրպետները միայն խանգարում են ազգերին համերաշխ գործելու և հանրային գաղափարական բերկրանքներով ուրախանալու։ (Ջերմ ծափահարութիւններ)։

Նկարիչ Գ. Բաշինջաղեան արտասանեց մի շարք ոտանաւորներ վրացերէն լեզուով, որոնք ընդունվեցին մեծ հաճոյքով և անկեղծ ողջոյններով։ Նա արտասանեց կտորներ Գուրամօշվիլիից, Ռուսթավէլիից և Սայաթ-Նովայի անտիպ աշխատութիւններից։

Երիտասարդ բանաստեղծ Մճէդլիշվիլի արտասանեց երկու ոտանաւոր սեփական ստեղծագործութիւններից։ Նա արտասանում է մտազբաղ, խորասուզված, հանգիստ ոգևորութեամբ, գեղեցիկ արտասանութեամբ։

Ս. Զ. Զավրիէվ կարդաց մի քանի ոտանաւորներ Բալմօնտ, Բրիւսօվ, Բլօկ բանաստեղծներից։ Այդ ոտանաւորները վերջին տարիների ստեղծագործութիւններ են իրանց յատուկ գունաւորութեամբ։ Զավրիէվ արտասանում է առանձնայատուկ եղանակով։ (Ծափահարութիւններ)։

Ա. Ի. Կանչելի արտասանեց Կօնօպլից-կիից երկու ոտանաւոր, որոնք թողին ուժեղ տպաւորութիւն և արժանացան բուռն ողջոյնների։

Ց. Սօլօվեան խօսեց հայերի և վրացիների համերաշխութեան խնդրի շուրջը, պատմելով իր տպաւորութիւնները, որոնք յանգում են հանրային համերաշխ գործակցութեան գաղափարի փկարարին։ (Ծափահարութիւն)։

Իշխան Դ. Դիասամիձէ խօսեց հանգուցեալ Դ. Ղիփիանիի գործունէութեան և նրա քաղաքացիական արիութեան մասին, բերկրանք յայտնեց, որ ներկայ գրական երեկոյթը հանդիսանում է մի նոր առիթ գեղեցիկ մտքեր յարուցանելու և ազգերի համերաշխութեան զգացմունքները ամրացնելու։ Ի վերջոյ նա առաջարկում է ուղարկել հեռագիր իշխան Սումբատովին, որը ռուսաց բեմի առաջնակարգ գործողներից մէկը լինելով՝ պարծանք է և հայրենի երկրի մտաւորականութեան համար։

Առաջարկը ընդունվում է ուրախութեամբ և ծափահարութիւններով։

Դերասան Աղայեան արտասանեց մի ըզգացված ոտանաւոր, որի իմաստն էր ներկայացնել տառապեալ հայերին լուսաւոր Եւրոպայի առաջ։ (Ծափահարութիւններ)։

Այնուհետև հայր Կալատօզեան ողջունեց երեկոյթը, որտեղ նա տեսնում է միութիւն հայ և վրացի եղբայրների միջև, տեսնում է դրա մէջ մի գեղեցիկ հոյակապութիւն, որը կարող է արգասաւոր լինել երկու ազգերի համար։ Հայր Կալատօզեան խօսում է զգացված և գեղեցիկ։ Նա խօսեց հայերէն ու վրացերէն և թողեց լաւ տպաւորութիւն։

Վերջում կարդացվեց հեռագրի բնագիրը, որը ժողովականների կողմից ուղարկվեց իշխան Սումբատովին։ Ահա նա.

«Հայ, վրացի և ռուս ինտելիգենցիայի ներկայացուցիչները, ժողոված «Աղբիւր-Տարազի» Գրական-Գեղագիտական Սալօնում մի երեկոյթի, որ նուիրված է ձեր և վրացի հեղինակների գործունէութեան, առաքում են ձեզ ջերմագին ողջոյն, ցանկալով առողջութիւն և ոյժ՝ աշխատելու երկար տարիներ գեղարուեստի ասպարէզում»։

Երեկոյթը թողեց գեղեցիկ տպաւորութիւն հանդիսականների վրա։

Ն—Ն

Երէկ երեկոյեան Մոսկվայից՝ իշխ. Իւժին-Սումբատովից ստացվել է հետևեալ պատասխան-հեռագիրը Սալօնի անունով.

«Ցաւիտեան թանգ է և սրտակից կովկասեան ինտելիգենցիայի ծաղկի ողջոյնը, ինտելիգենցիայի՝ որ յարգել է ինձ իր բարձր ուշադրութեամբ։ Այդ, և միայն այդ, յոգնած ոյժերիս աշխուժութիւն է տալիս, ինչպէս ասում է բանաստեղծը։ Ողջունում եմ՝ խոնարհելով մինչև գետին։ Ջերմ շնորհակալութիւն»։

ԱՆՅԵՏԱՁԳԵԼԻ ԿԱՐԻՔ*)

IV

Ի՞նչ անել ուրեմն։

Քաղաքի հայ դպրոցները, ուր սովորում են աղքատ դասակարգի երեխաները, պիտի ամուր հողի վրա դնել, որպէսզի նրանք կարողանան տալ լաւ պատրաստված սերունդ, քաջ իմացող թէ հայերէնը և թէ ռուսերէնը, և այդ նպատակին որոշ չափով հասնելու համար՝ բոլոր դպրոցները պէտք է 6-ամեայ դարձնել։ Ներկայ դրութեամբ մեր դպրոցները չեն կարող մրցել թէ քաղաքային և թէ պետական դպրոցների հետ, ուր ուսումը ձրի է, բացի միջնակարգ դպրոցներից, որոնք մատչելի են միայն ունեւորներին։ Ինչպէս յայտնի է, վերջերում մայրենի լեզուն համարեա չը կայ, որովհետև առաջինը՝ նա պարտադիր չէ, երկրորդ՝ շատ անարժան և անպատուասէր ծնողներ չեն էլ ուզում, որ իրանց որդիները սովորեն մայրենի լեզուն, և դրանով առիթ են տալիս գիմնազիայի վարչութիւններին աւելի ևս արհամարհել այդ լեզուն՝ հասկանալի պատճառով. երրորդ՝ բացի դրանից՝ մայրենի լեզուի և կրօնի դասատուներից շատերը իրանց կոչման բարձրութեան վրա չեն կանգնած։

Եւ քանի որ մեր սերնդի ունևոր մասը դատապարտված է ազգայնօրէն այլասերման, դառնալով մի՝ ոտի տակ հող չունեցող տարր, հարկաւոր է մտածել մեր դպրոցների բարեկարգութեան մասին, որպէսզի նրանցից դուրս գայ ցանկալի առողջ սերունդ, օգտակար՝ թէ իր ազգին և թէ տէրութեան։

Հարկաւոր է աշխատել նոյնպէս, որ պետական դպրոցներում մայրենի լեզուն պարտադիր լինի և լաւ պատրաստված և պարտաճանաչ ուսուցիչներ ունենայ, որպէսզի անպատուասէր հայ ծնողները չը համարձակվեն գրել գիմնազիաների դիրեկտորներին, որ իրանց որդիներին մայրենի լեզուն չը սովորեցնեն և դրանով ցոյց տան օտարների մօտ՝ իրանց զզուելի բարոյական պատկերը, ի նախատինս իրանց ազգի։

V

Վերև յիշածս անյետաձգելի կարիքներին բաւարարութիւն տալը կախված է մեր բարեգործական զգացումների զարգացումից։ Իսկ «բարեգործութիւնը, որի գլխաւոր նպատակն է թեթևացնել կեանքի ամենածանր պայմանները, հեռացնել սուր կարիքը, ուր նա երևում է, պիտի մեծ ծաւալ ունենայ» (ակադեմիկ Բեխտերեվ **)։

Հռչակաւոր պրոֆեսորը իր՝ ինքնասպանութեան վերաբերեալ յօդուածում, որի բովանդակութիւնը տպված էր «Աւրօրի» № 7—8-ում, յայտնում է հետևեալը. «Պէտք է զարգացնել հասարակութեան մէջ այն գաղափարը, որ աշխատանքը ընդհանուրի համար, ամենքի պարտականութիւնն է» (ընդգծումը իրանն է)։

«Պարտականութեան և օգնութեան զգացմունքը ուրիշներին պէտք է գաղափարացնել։ Նա պէտք է մտնի աշխարհի մարմնի և արեան մէջ և դառնայ նրա երկրորդ բնաւորութիւնը»։ Բարեբաղդաբար մեր ազգը, շնորհիւ պատմական այլևայլ պատճառների, օժտված է բարեգործական զգացմունքներով, և մեր բոլոր հիմնարկութիւնները պահվում են՝ շնորհիւ այդ զգացմունքի արտայայտութեան. սակայն այդ զգացմունքը պէտք է լայն ծաւալ ստանայ ժողովրդի մէջ, որպէսզի ամեն մէկը՝ ըստ իր կարողութեան իր լուման ձգի ընդհանուր գանձարանը ազգի պէտքերի համար. երկրորդ, չը պէտք է բոլոր հոգսը թողնել մեր բարեգործական հաստատութիւնների և բարերարների վրա—Մանթաշեանների, Աֆրիկեանների և այլոց։ Չը պիտի մոռանալ, որ մի հարուստ բարերար՝ Պ. Ղուկասեանը իր վրա վերցնէ օրինակ Հայոց Հրատ. Ընկերութեան զգալի ծախսը, տարեկան 3000 ր. մանկական գրքեր հրատարակելու համար։

Մի ժամանակ շատ գրվեց և խօսվեց դպրոցական տուրք մտցնելու մասին։ Մի շատ գեղեցիկ միտք, հեշտ իրագործելի և բոլորին մատչելի. բայց ծուր մնաց այդ համակրելի գաղափարի գործադրութիւնը:

---

*) Տես «Մշակ» № 239.

**) «Աւրօրա» 1912 թ. № 7—8. երես 158.

Սկսենք այժմ այդ բանը իրականացնել և ընտրենք ամեն եկեղեցու ծխի մէջ վստահելի անձնաւորութիւններ, որոնք պէտք է աշխատեն կեանքի մէջ գործ դնել. և եթէ այդ բանը իրականանայ, մեր բոլոր դպրոցները միանգամայն ապահովված կը լինեն և մենք կունենանք 6-ամեայ դպրոցներ, ուր թէ մայրենի և թէ պետական լեզուները կաւանդվեն միւս առարկաների հետ մեծ աջողութեամբ: Պէտք է աշխատել, որ այդ տիպի դպրոցների թիւը շատանայ՝ թէ գիւղերում և թէ քաղաքներում: Առաջիններում համարեա բոլորը միդասեան են: Երևանի թեմում դպրոցների ընդհանուր թիւը հասնում է 154-ի, 13,034 աշակերտներով երկու սեռի. միդասեանները հաշւվում են 132, երկդասեանները 19. բարձր՝ 3*): Մեզ յայտնի է, որ Թիֆլիսում միայն երեք հատ երկդասեան դպրոց կայ (Քամոյեան, որ ներկայ տարում բացել է 6-րդ բաժանմ., և Թանդոյեան դպրոց):

Թիֆլիսի թեմում **) ընդամենը հաշւվում են դպրոցներ 98, որոնցից միադասեան՝ 86, երկդասեան 12, որոնք գլխաւորապէս թեմի քաղաքներումն են: Աշակերտների թիւը՝ աղջիկներ՝ 3500, տղերք՝ 4772, ընդամենը՝ 8272: Թեմ. տեսուչ Ց. Տէր-Միրաքեանը, որը յայտնի է իբրև մասնագէտ-մանկավարժ, իր հետաքրքրական տեղեկագրում այն գաղափարն է յայտնում, որ «պէտք է, ուր որ հնարաւոր է և յարմար, կենտրոնական դպրոցներ բանալ 4-ամեայ և 6-ամեայ դասընթացներով», որպէսզի ամփոփուած տրվի և դրանով բարձրացվի ժողովրդի աչքում մեր դպրոցական գործի դիրքը» (երես 35):

Խելացի առաջարկութիւն թեմ. տեսչի կողմից, որը խօսում է իրազեկ լինելով թեմի կարիքներին:

«Մշակի» ներկայ տարվայ № 232-ում Մոսկվայից մի թղթակցութիւն էր տպված «Հայոց լեզուի թաղումը Լազարեան ճեմարանում» խորագրով, ուր յօդուածագիր Տէր-Մկրտչեանը՝ ի միջի այլոց գրում է հետևեալը. «Հրէաները, որ անյիշելի ժամանակներից հալածվում ու նեղվում են, միջոց են գտնում պահպանել իրանց ազգային առանձնայատկութիւններն ու կուլտուրան. իսկ մենք՝ հայերս գտնվելով անհամեմատ աւելի լաւ պայմանների մէջ, մեր սեփական ձեռքերով թաղում ենք մեր լեզուն ու այդպիսով նպաստում ուրիշ ազգերին կուլ գնալուն»: Հայոց լեզուն Լազարեան ճեմարանում արհամարհված է. թէև շարունակվում է 8 տարի, բայց ոչ մի արդիւնք, գրում է յօդուածագիրը. Նոյն տխուր տեսարանն է և բոլոր պետական դպրոցներում. և դրա պատճառը ոչ այնքան կառավարութեան արգելքն է, այլ՝ կրկնում ենք՝ անպատուասէր, ինքնասիրութիւնից զուրկ ծնողների յանցաւոր վերաբերմունքը դէպի իրանց մայրենի լեզուն:

Բաւական է մեր ցաւոտ վէրքերի մասին երկար խօսել: Հարկաւոր է մտածել նրանց բժշկութեան մասին, որպէսզի այդ վէրքերը չը դառնան անբուժելի փտախտ, չը վարակեն ամբողջութիւնը և չոչնչացնեն այն: Ուրեմն՝ թէ բարեգործական ընկերութիւնները, թէ բարերարները մէկ կողմից, թէ հասարակութիւնը՝ ծխական տուրք մտցնելով՝ միւս կողմից, և Նորին Վեհափառութեան հրամանով հիմնված դպրոցական ֆօնդը՝ միահամուռ կերպով պիտի աշխատեն մեր վերև յիշած կարիքներին բաւարարութիւն տալու, միատեսակ գործելով թէ քաղաքներում և թէ գիւղերում, տալով մատաղ սերնդին հիմնաւոր կրթութիւն լուրջ պատրաստութեամբ՝ թէ մայրենի և թէ պետական լեզուների մէջ: Սրանք են ներկայումս մեր ազգային անյետաձգելի կարիքները:

Բժ. Բ. Աղասարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Ընտրվել են մինչև օրս Պետական Դումայի 393 անդամներ, որոնցից 137 աջակողմեան, 15 չափ. աջ., 57 նացիօնալիստ, 73 հոկտեմբերեան, 19 առաջադիմական, 45 կադէտ, 5 աշխատաւորական, 7 սօց.-դեմօկրատ, 12 ձախակողմեան, 6 լեհական կօլօյին պատկանողներ, 4 նարօդօվցիներ, 3 լեհական խմբակից, 2 լիտօվցի նացիօնալիստ, 3 մահմ. ֆրակցիայից, 3 անկուսակցական:

Պետերբուրգի առաջին կուրիայի կողմից ընտրվել են ինժեներ Բարիշնիկօվ առաջադիմական, Վէյխօվ՝ ձայնաւոր դումայի՝ կադէտ, Կլուգին՝ ինժեներ էլեքտրիկ՝ առաջադիմական: Սևացան Դումայի նախկին անդամներ Անրէպ, Լերխէն, Սազօնովիչ, նախկին քաղաքագլուխ Լելյանօվ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի Նահանգապետի կարգադրութեամբ Նահանգական գիւղացիական գործերի ատեանի անդամ Շէստակօվը և հարկային տեսուչ Ղորղանեան ներկայումս ռեվիզիա են կատարում Թիֆլիսում հասարակական քաղ. ինքնավարութեան մէջ:

◆ Կազմված է Աւճալեան ջրանցքը ընդլայնելու նախագիծ, որի համաձայն Թիֆլիս քաղաքն ամեն օր ստանալու է խմելու ջուր 1 միլիօն դոյլ: Աւճալեան ջրանցքի ընդլայնումը տեղի կունենայ նոյն իսկ Ծալկայից կամ Նատախտարից ջուր բերելու դէպքում. ընդլայնելու աշխատանքների համար քաղաքային վարչութիւնը խնդրում է դումայից յատկացնել 350,000 ռուբլի:

◆ Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Թիֆլիսի Վանքի եկ.-ծխ. դպրոցի ուսուցիչներից մէկը յաճախ ծեծում է աշակերտներին. ուստի դարձնելով նոյն դպրոցի վարչութեան ուշադրութիւնը այս տգեղ երևոյթի վրա, յոյս ունենք, որ նա իր կարգադրութիւնով վերջ կը տայ իր խընամքին յանձնված դպրոցի փոքրիկների վրա տէր-Թօզիկեան մեթօդի գործադրութեան»:

◆ Այսօր, առ. ժ. 10-ին, Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեան շինութեան մէջ նշանակված է Թիֆլիսի արհեստաւորների վարկային ընկերակցութեան հերթական ընդհանուր ժողովը:

◆ Նոյեմբերի 5-ին Զուբալօվի Ժողովրդական Տանը տեղի կունենայ Թիֆլիսի Ժողովրդական Համալսարանի Ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովը:

◆ Այսօր Ժողովրդական Տանը Կօզլօվի դասախօսութիւնն է երիտասարդութեան մասին, որից յետոյ կը լինի համերգային բաժին:

◆ «Т. Л.»-ը հաղորդում է, որ 3 օր առաջ Ալավէրդի գործարանից Թիֆլիս են բերել ուժեղ պահակախմբի ուղեկցութեամբ մի անյայտ մարդու, որ իրան անուանում էր Գերասիմ Գլախվեան, որի դէմ ուժեղ կասկածներ կան Կօջօրի ճանապարհին պօստի վրա եղած յարձակման գործում:

◆ Հեռագրում են, որ Պետական Խորհրդի նախկին անդամ Պ. Օ. Ղուկասեանը այս անգամ չէ ընտրվել Պետական Խորհրդի անդամ:

◆ Կովկասի փոխարքան թոյլ տուեց խաղալ հայերէն «Հօր անցեալը կամ մինը շատերից», դրամա 3 գործ., հեղ. Դաշտէցեանի, և «Արցունքի ծովը», դրամա 4 գործ., հեղ. Շահպարոնեանի:

◆ Թիֆլիսի Նահանգապետը թոյլատրեց Կլիմիէվային հրատարակել ռուսերէն թերթ «Էնցիկլօպէդիա» անունով՝ շաբաթը երկու անգամ, և Սամխարաշվիլիին մի ամսաթերթ վրացերէն լեզուով:

◆ Ամսիս 24-ին հրատարակվեց «Նոր-Դար» լրագրի մի համարը՝ հրատարակութեան իրաւունքը վերապահելու համար:

◆ Հոկտ. 26-ից Թիֆլիսում սկսվեցին վրաց դրամատիկական դասընթացքների աշխատանքները: Դասախօսութիւնները կարդացվում են երեկոները:

◆ Այսօր Արքունական թատրօնում ցերեկով էժան գներով կը տրվի Չայկօվսկիի «Եւգենի Օնէգին» օպերան: Իսկ երեկոյեան կը ներկայացվի «Цыганскій баронъ» օպերետը:

◆ Վաղը Արքունական թատրօնում յօգուտ Թիֆլիսի 3-րդ տղայոց գիմնազիայի աղքատ աշակերտների կը ներկայացվի «Հուգէնոտներ» օպերան:

◆ Ռուսաց ակումբի աւագ կապիտան Մօխաէևին նահանգապետը թոյլ է տուել կազմել «սլավօնական երեկոյթ», որի ամբողջ հասոյթը կուղարկվի Սերբիայի, Բոլգարիայի և Չեռնօգորիայի Կարմիր Խաչի ընկերութեան:

◆ Բաքւում մի խումբ հայ ժուռնալիստներ, ինչպէս Թիֆլիսում կազմվեց, մտադիր են նոյն տեսակ ժուռնալիստների փոխադարձ ընկերութիւն կազմակերպել:

◆ Բագուեցիների մի խումբ առաջ է մղում Բագուի քաղաքագլխի պաշտօնի համար նաւթարդիւնաբերող Ղուկասեանի թեկնածութիւնը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պօլիս, 17 հոկտեմբեր

Ազնիւ տէր Հ. Առաքելեան.

Ազգ. Կեդր. Վարժարանի 25-ամեայ յոբելեանական յանձնախումբս, նկատողութեան առնելով երկրին քաղաքական արդի վիճակը և միանգամայն յուսալով, որ մինչև յառաջիկայ գարուն Կեդր. Վարժարանի նոր շէնքին կառուցման ալ կարելի կըլլայ ձեռնարկել, որոշեց յետաձգել յոբելեանական հանդէսը մինչև յառաջիկայ ապրիլ.

Յանձնախումբս աներկմիտ է, որ այս առթիւ սկսուած հանգանակութիւնք աւելի դիւրութեամբ պիտի կարենան կատարուիլ և Վարժարանին համակրողք աւելի ժամանակ պիտի ունենան իրենց նուէրները հասցնել յանձնախումբիս:

Հաճեցէք ընդունիլ մեր խորին յարգանքները:

Ի դիմաց յոբել. յանձնախմբի՝
Ատենապետ՝ Յ. Յակոբեան
Ատենադպիր՝ Վահան Թէքէեան

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ մայրը սարսափելի կերպով տանջվում էր

Այս ճրի դեղատոմսը նրան բժշկեց:

Իմ մայրը խնդրել է ինձ յայտնել ի տեղեկութիւն ընդհանուրի այն փայլուն բուժման վերաբերեալ, որ նա ձեռք բերեց, շնորհիւ այն ձրի դեղատոմսի, որ կտրել էր լրագիրներից: Նա սարսափելի կերպով տառապում էր երկար ժամանակ: Բժիշկները նրանում որոշել էին նէվրալգիա, նէֆրիտ և մի ամբողջ շարք հիւանդութիւններ: Նա տանել չէր կարողանում իր գլխի ցաւերը, իսկ բոլոր դեղերը վատ ներգործութիւն էին անում նրա սրտի վրա: Իր ցաւերի թեթևութիւնը նա զգաց այն ժամանակ, հէնց որ սկսեց գործածել վերոյիշեալ միջոցը: Դեղատոմսը հետևեալն է. մտէք մօտակայ դեղատունը կամ դեղավաճառանոցը և խնդրէք 60 գրան Կէֆալդօլ-Ստօր՝ 12 տաբլէտկաների մէջ: Երկու տաբլէտկա ընդունելուց՝ իսկոյն թեթևանում են ցաւերը, այնուհետև պէտք է ընդունել իւրաքանչիւր ժամը մի-մի տաբլէտկա, մինչև կատարեալ ապաքինումը: Ես ինքս տառապել եմ ինֆլուէնցայով, գիշերը ընդունել եմ Կէֆալդօլ և առաւօտեան քնից վեր եմ կացել կատարեալ առողջ:

(П. 141281) (№ 2)

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՋԻԼԻՆ“

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց: Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին: Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.:

Միաժամանակ լաւ է ներգործում բէ սուր եւ բէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը:

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով: Ճանապարհածախքը պօստային սակագնով:

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում:

(Կ.) (П. 23620) 52—41

Золотая медаль Лондонъ 1893 г.

ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ! ПРОВИЗОРА Г. Ф. ЮРГЕНСЪ БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО отъ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ и ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ. БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ 1/1 кус. 50 к. 1/2 кус. 30 к.

Главный складъ у Г. Ф. Юргенсъ, Москва.

(М. 5874) 24—19

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ
ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
Դրամա 4 արարուածով և 5 պատկերով:
Գինն է 50 կոպէկ:

Կարելի է ուղարկել պօստի մարկաներ: Դիմել՝ Тифлисъ, Книж. магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“. Г. И. Галустянцу.

Նոյն տեղը վաճառվում են ամեն տեսակ գրքեր:

(ա.օ) 804. 2—2

Մի պատուաւոր հայ ընտանիքում ՏՐՎՈՒՄ է
10—14 տարեկան աշակերտներին
ՃԱՇ և ԲՆԱԿԱՐԱՆ:

Կարելի է և առանց ճաշի, ամենամատչելի գնով: Հասցէն՝ IV քաղաքամասում, Պօլիցէյսկայա փողոց, № 21. երկրորդ մուտքը Սինօդալնայա փողոցից, № 12: Բնակարան № 2, միջին յարկում:

(ե.հ.կ.) 778. 6—5

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների: Էլեկտրաբուժութիւն:

Ընդունե- (12 1/2—2 ժ. ցերեկվայ:
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան:
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի): Տէլէֆօն № 1175.

(օ. մ.) 377. 100—33

Շուտով լոյս կը տեսնի
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-ի
ՈՍԿԵԹԵԻԿ
Նոր գիրքը, գինը 30 կոպ.

ՄԻՒՍ ԳՐՔԵՐԸ. «Ծովինար» 25 կ., «Ձէն թաղաւորի աղջիկ» 35 կ., «Երկու աղբերացեղ» 30 կ., «Աստուած աղքատի կերպում» 20 կ., «Հէքիաթներ» 30 կ., «Աստծու դատաստան» 5 կ., «Երեք ոսկու պատմութիւն» 30 կ., «Անմեռ աշխարհ գնացողը» 8 կ., «Սրտաշահ բաներ» 20 կ., «Ազգային առակներ» 30 կ., «Աստուած չը ճանաչող» 10 կ., «Գալօ Աֆօ» 12 կ., «Ժամանակը ոսկի» 40 կ., «Սիրտ գրքից 9 պատմութիւն» 40 կ., «Քաջ Աղասի» 25 կ., «Սասունցի Ցօվնան» 30 կ., «Խուլ Խաչիկ» 25 կ., «Երկասիրութիւններ» 40 կ., «Ծերերի գրոյցներից» 20 կ., «Վարդանանց և Ղևոնդեանց մասին» 30 կ., «Վէրք Հայաստանի գրքի գոհարներից» 10 կ., «Սիրտ գրքից ծնողների նամակները որդուն» 15 կ.:

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին: Հեղինակի հասցէն՝ Թիֆլիս, Միքայէլեան փողոց, № 82.

(հ.կ.) 794. 10—2



ԹԱՏՐՕՆ-ԻԼԼԻՒԶԻՕՆ

Եթէ Դուք կամենում էք ձերայինների և Ձեր բարեկամների հետ Ձեր ազատ ժամերն անցկացնել զուարճան և օգտաւէտ, այդ դէպքում աւելորդ տեղից փող մի շռայլէք խաղալիք-իլլիւզիօններ ձեռք բերելու համար, այլ թէ բերել տուէք ԲԵՐԼԻՆԻ մեր ֆաբրիկային պահեստից իսկական կինէմատօգրաֆիական ապարատ (որը խնդրում ենք չը շփոթել մոգական լապտերների հետ), որի օգնութեամբ Դուք իսկապէս կարող էք Ձեր տունը դարձնել, առանց սովորական սարք ու կարգը խանգարելու, թատրօն-իլլիւզիօն, սարքելով կենդանի-շարժական պատկերների ներկայացումներ, այն է զանազան ականաւոր դէպքեր, դրամաներ, կօմէդիաներ, երգիծաբանական տեսարաններ և այլն, որի համար մեզ մօտ կայ մեծ քանակութեամբ ժապաւէն: Միայն մեր ապարատները, որոնք աչքի են ընկնում առանձնապէս իրանց ամուր կօնստրուկցիայով, առաջացնում են ցանկալի էֆֆէկտ՝ տալով պարզ նկարներ էկրանի վրա՝ 2×2 արշ. մեծութեան: Մեր ապարատները յարմարեցված են ամեն տեսակ լուսաւորութեան, և նրա հետ վարվելու եղանակը շատ հեշտ է, այնպէս որ՝ նախապատրաստվելու կարիք չը կայ: Որպէսզի ամենքին բաւականութիւն պատճառած լինենք և մեր ֆիրման տարածենք Ռուսաստանում, մենք նշանակել ենք առաւելապէս էժան գներ: Ապարատ «Իւնօ» իր բոլոր պատկանելիքներով՝ «Իսկրա» լամպով, րէֆլէկտօրով, 4 երկար ժապաւէններով, 250 պատկերներով—8 ր. 50 կ.: Այդ ձևի ապարատ՝ «Իդէալ», մեծ գիրքով, ամենալաւ օբիէկտիվով և շատ շքեղ 3 զանազանագոյն և 3 լուսանկարչական ժապաւէններով, «Դիանա» լամպով—14 ր. 50 կ.: Ապարատ «Հէրկուլէս» ամենամեծ տիպի, երկու անիւներով՝ ժապաւէնը փաթաթելու և ետ տալու համար, 300 արշ. երկար., մեխանիկ. օբիէկտիվով՝ 5 օպտիկ ապակիներով, «Էլեկտօր» յայտնի լամպով, 6 հատ բազմագոյն և 6 հատ լուսանկարչական ժապաւէններով, Էդիսօնի պէրֆօրացիայով—30 ր.: Պահեստի ժապաւէններ՝ 1 ր., 1 ր. 25 կ. և 2 ր.: Պատուէրները կատարվում են վերադիր վճարով: Ճանապարհածախք և մաքս հաշւվում է 1 ր. 50 կ.: («Հէրկուլէս» ապարատի համար 2 ր. 50 կ.): Ասիական Ռուսաստան 1 ր. թանգ: Պատուէրներով դիմել.

Междунар. Эксп. Х. ФИНКЕЛЬШТЕЙНЪ, Германія, БЕРЛИНЪ, ул. Кантъ, № 120/44.
Exporthaus H. Finkelstein, Berlin, Kantstr. № 120/44.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:

(Ն. 11) (Л. 12854) 2—1

„ՊԱՆԹԷՈՆ“ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՄՈՍԿՎԱ

Լոյս է տեսել եւ վաճառվում է բոլոր գրախանութներում.

1. ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ «Բանաստեղծութիւններ» I հատոր, գինն է 1 ռուբ.

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնի

2. ԱՐԹՈՒՐ ՇՆԻՑԼԵՐ «Երկերի ժողովածու» I հատոր. հեղինակի պատկերով, կենսա-քննական տեսութեամբ ու խմբագրութեամբ Պ. Մակինցեանի

Մի հրաժեշտ: Ծաղիկներ: Լէյտենանտ Գուստլ: Մահացում: Տիկին Բերտա Գարլան:

Պատուէրների համար դիմել՝ Москва, Малая Царицынская, д. №18, Павлу Макинцянъ.

Պատրաստվում են՝

3. ԳԵՐՀԱՐՏ ՀԱՈՒՊՏՄԱՆ «Երկերի ժողովածու» I հատոր. խմբագրութեամբ և կիսա-քննական տեսութեամբ Պ. Մակինցեանի

4. ԼԵՐՄՕՆՏՕՎ «Երկերի ժողովածու», խմբագրութեամբ Վահան Տէրեանի:

Թարգմանութիւնները ուղարկել՝ Москва, 3-я Тверская-Ямская, д. Бородина кв. 29. Вагану Терьянъ.

Ընդունված թարգմանութիւնները անպայման վարձատրվում են:

(Կ.) 806. 6—1

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ստացվել են հետևեալ գրքերը վաճառելի.

ԴԻԿԿԵՆՍ. «Դաւիթ Կօպերֆիլդ», մասն I, II և III, միասին 2 ր. 25 կ.
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. «Երկերի ժողովածու», հատոր IV . 1 » 50 »
ԺՈՒԿՕՎՍԿԻ. «Քնած արքայադուստրը» 15 »
ԱՀԱՐՈՆԵԱՆ. «Աստծու կրակը» 15 »
» «Մրրկի սուրբը»
» «Իտալիայում»
» «[illegible] մէջ»
» «[illegible]»
» «[illegible]»
» «[illegible]»
» «[illegible]»
ՕՐՄԱՆԵԱՆ. «Ազգապատում», ժամանակագրութեամբ, պրակ 50 »
» «Համապատում» . 3 » —
» «Հայոց եկեղեցին» . 1 » —
ՑԱՆԱՆ. «Հոգեբանութիւն, [illegible]» 50 »

Մինինու գրամով վաճառվում են հրատարակչական [illegible] նոր դասագրքեր թէ հայերէն և թէ օտար լեզուներով: Պատուէրները կատարվում են արագ:

Դիմել Тифлисъ, Центральная Книжная Торговля. С. П. Теръ-Израеліанъ.

805. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Հաշւապահական Կուրսերի հիմնադիր
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ
ՁԵՌՆԱՐԿ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ
ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՈՎ
([illegible])
Գինն է 2 ռուբ.

Վաճառվում է հեղինակի մօտ. Тифлисъ, Николаевская 22 և բոլոր գրավաճառանոցներում.

(կ. ե. հ.) 788. 10—4

Լոյս է տեսել
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
մանկական նոր հէքիաթը պատկերազարդ
ՔԱՋ ՆԱԶԱՐԸ
Գինը 40 կոպէկ:

[illegible] դիմել Тифлисъ, Вельяминовская № 22. Контора А. Заргарьянцъ, Ф. Вартазарьянцъ и Кº.

([illegible]) 799. 3—2

На Всемірной и другихъ выставкахъ заводы удостоились высшихъ знаковъ.

Акціонерное Общество механическихъ заводовъ
БОРМАНЪ, ШВЕДЕ и Кº

принимаетъ полныя оборудованія: винокуренныхъ, ректификаціонныхъ, пивоваренныхъ, крахмальныхъ, дрожжевыхъ, сушильныхъ для картофеля и барды заводовъ. Паровые котлы всѣхъ системъ, паровыя машины, желѣзныя герметическія бочки, (для спирта, масла, глицерина и бензина) бронзовыя клейменныя мѣры для жидкостей, аппараты для очистки и опрѣсненія воды и вообще всякія работы, входящія въ область желѣзнаго и мѣднаго котельнаго дѣла. По особому требованію заводъ командируетъ инженера или монтера. Смѣты и чертежи по первому требованію.

Обращаться: Тифлисъ, Михаилу Васильевичу Татевосянцъ.

(Կ.) 789. 10—2

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդոյեվի
Թիֆլիս, Երևանեան հր. № 164, անկիւն Բանկովսկայա փ. Տելեֆոն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ

[illegible]

(հ.ս.) 617. 50—9

Ներկայ նոյեմբեր ամսի 1-ից Պուշկինսկայա փողոցում № 29 Դօլուխանովների շինութեան մէջ, քաղաքի կենտրոնում,

ԲԱՑԵԼ ԵՄ ԵՒՐՈՊԱ ՀԻՒՐԱՆՈՑ,

[illegible]

(կ. կ.) 748. 10—7

---

*) «Դպրոցական գործը Երևանի թեմում», Մելիք-Բաբլխուդարեանի. «Հորիզոն» 1912 թ. № 230:

**) «Տեղեկագիր 1911/12 Վրաստանի և Իմերէթի թեմի հայ դպրոցների», Տէր-Միրաքեանի, 1912 թ.:

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный